

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հունիսի 2011 թվականի N 860-Ն

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԱՊՈՍՏԻԼ ԴՆԵԼՈՒ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՍ ԱՊՈՍՏԻԼ ԴՆԵԼՈՒ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը` համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին` Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի ստորաբաժանումում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համար բացել արտաբյուջետային հաշիվ` իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայությունների մատուցումից ստացվող ֆինանսական մուտքերի հաշվեգրման նպատակով:

3. Սահմանել, որ`

1) սույն որոշման 1-ին կետով նախատեսված արտաբյուջետային հաշվի միջոցները տնօրինվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համաձայնեցված նախահաշվին համապատասխան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում սույն կետի 1-ին ենթակետում նշված արտաբյուջետային հաշվի միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվություն` Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության մեջ ներառելու համար:

4. Հաստատել իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման կամ ապոստիլ դնելու վճարովի ծառայության մատուցման պայմանագրի ձևը` համաձայն N 2 հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Մարգարյան**

2011 թ. հունիսի 28  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
հունիսի 2-ի N 860-Ն որոշման

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ  
ԱՊՈՍՏԻԼ ԴՆԵԼՈՒ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

1	2	3	4
NN ը/կ	Ծառայության տեսակը	Ծառայության մատուցման ժամկետը	Վճարի չափը (դրամ)
1.	Հասարակական միավորումների, հիմնադրամների, ոչ առևտրային իրավաբանական անձանց միությունների, արհեստակցական միությունների, գործատուների միությունների պետական գրանցում կամ գրանցման գրավոր մերժում, ինչպես նաև դրանց առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառում կամ հաշվառման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը: Առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումը կամ հաշվառումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետներում:	մեկ աշխատանքային օրվա ընթացքում  երեք աշխատանքային օրվա ընթացքում  հինգ աշխատանքային օրվա ընթացքում	60000  40000  30000
2.	Վերակազմակերպումների պետական գրանցում կամ գրանցման կամ հաշվառման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը: Առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետներում:	երկու աշխատանքային օրվա ընթացքում  հինգ աշխատանքային օրվա ընթացքում	100000  50000
3.	Մույն ցանկի 1-ին կետում չնշված ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև առևտրային	մեկ աշխատանքային	30000

	կազմակերպությունների ոչ ստանդարտ կանոնադրությունների դեպքում (բացառությամբ էլեկտրոնային եղանակով անհատ ձեռնարկատիրոջ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 120-Ն որոշման) պետական գրանցում կամ գրանցման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը: Առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումը կամ հաշվառումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետներում:	օրվա ընթացքում	
		երկու աշխատանքային օրվա ընթացքում	20000
		երեք աշխատանքային օրվա ընթացքում	15000
4.	Առևտրային կազմակերպությունների նմուշային կանոնադրություն տրամադրելու դեպքում 2-ից ավելի յուրաքանչյուր կանոնադրության տրամադրում՝ թղթային եղանակով		1000
5.	Իրավաբանական անձանց գրանցման ժամանակ 2-ից ավելի ոչ ստանդարտ կանոնադրություն ներկայացնելու դեպքում յուրաքանչյուր թղթային եղանակով ներկայացված կանոնադրությունների ուսումնասիրություն և հաստատում		1000
6.	Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ թղթային եղանակով տեղեկատվության տրամադրում	նույն աշխատանքային օրվա ընթացքում	8000
7.	Իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրում՝ թղթային եղանակով	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	10000
8.	Ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	10000
		երկու աշխատանքային օրվա ընթացքում	7000
9.	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ ուղղման, փոփոխման, լրացման	երեք աշխատանքային	30000

	Էզրակացության հաստատում կամ մերժում	օրվա ընթացքում	
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	20000
		տասը աշխատանքային օրվա ընթացքում	10000
10.	Անվան, հայրանվան, ազգանվան փոխման Էզրակացության հաստատում կամ մերժում	երեք աշխատանքային օրվա ընթացքում	50000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	30000
		տասը աշխատանքային օրվա ընթացքում	20000
11.	Քաղաքացիական կացության ակտի գրանցման վերականգնման էզրակացության հաստատում կամ մերժում	երեք աշխատանքային օրվա ընթացքում	30000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	20000
		տասը աշխատանքային օրվա ընթացքում	10000
12.	Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը միմյանց կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության գրանցման մասին թույլտվության տրամադրում	երկու աշխատանքային օրվա ընթացքում	150000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	120000
		յոթ աշխատանքային օրվա ընթացքում	90000
13.	Փաստաթղթի վրա ապոստիլ դնելը	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	8000

(Հավելվածը խմբ. 11.08.11 N 1194-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
հունիսի 2-ի N 860-Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՍ  
ԱՊՈՍՏԻԼ ԴՆԵԼՈՒ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

քաղ. Երևան \_\_\_\_\_ 20 թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝  
կատարող, ի դեմս \_\_\_\_\_ -ի, որը գործում է ըստ  
\_\_\_\_\_ -ի, մի կողմից, և \_\_\_\_\_ ը, այսուհետ՝  
պատվիրատու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Համաձայն սույն պայմանագրի՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուին կարճ  
ժամկետում մատուցել \_\_\_\_\_

\_\_\_\_\_ վճարովի ծառայություն:

1.2. Ծառայությունը մատուցվում է \_\_\_\_\_ -րդ աշխատանքային օրը:

1.3. Ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուին ծառայությունը  
տրամադրելու վերաբերյալ համապատասխան մատյանում նշում կատարելու և պատվիրատուի  
կողմից ստորագրվելու պահից:

**2. Կողմերի պարտականությունները**

2.1. Կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել պատշաճ որակով և  
պայմանագրով նախատեսված ժամկետում:

2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել ծառայությունների մատուցման համար  
նախատեսված գումարը:

**3. Պայմանագրի գինը**

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է \_\_\_\_\_ դրամ, որը լրիվ վճարված է  
պայմանագիրը կնքելու պահին, իսկ վճարման անդորրագիրը կցվում է:

3.2. Պայմանագրի գինը չի ներառում օրենքով սահմանված պետական տուրքի գումարը:

**4. Այլ պայմաններ**

4.1. Պայմանագրով նախատեսված ժամկետները խախտելու յուրաքանչյուր օրվա համար  
կատարողը պատվիրատուին վճարում է տուժանք՝ պայմանագրի գնի չափով:

4.2. Եթե ծառայությունները մատուցելու համար նախատեսված ժամկետում պատվիրատուն չի ներկայանում սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված ծառայության արդյունքում տրամադրվող փաստաթուղթն ստանալու համար, ապա ծառայությունների մատուցումը համարվում է պատշաճ կատարված, և կատարողն ազատվում է սույն պայմանագրով նախատեսված տուժանքի վճարման պարտավորությունից:

4.3. Կատարողն ազատվում է սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով:

4.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեներն ու վավերապայմանները

Պատվիրատու

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(ստորագրությունը)

Կատարող

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(ստորագրությունը)

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Մարգարյան**